ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 486-Ա « 02 » մայիսի 2025թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի N 254-Ն որոշումը, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 2025 թվականի հունվարի 14-ի N 103-Ա որոշումը՝

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեով Երևանի քաղաքապետարանի (առանց Երևան համայնքի վարչական շրջանների) մասով բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժին 07 խմբի 01 դասի «58. Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածով նախատեսված գումարներից 100-ամյա տարեցին դրամական աջակցություն տրամադրելու նպատակով հատկացնել 1000.0 հազար ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրության կատարման կազմակերպումը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի վրա, իսկ ֆինանսավորման գործընթացի ապահովումը՝ ֆինանսական վարչության պետի վրա:
3. Կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ